


է համօրիչի վրայ, սարքն ու ջահար, աչքերի սառելը, մարմնի զանազան մասերի խաղալը, երազը ու իր հազար ու մի կերպ մեկնութիւնները, ֆալչիները, ռամդարները, զբրացները, կանոնաւոր հալածանքի չենթարկուելով կեանքը լցնում են սուտ բովանդակութեամբ իսկ խեղճ գիւղացիների սիրտն ու հոգին սուտ երկիւղով և հոգեմաշ կասկածներով ... ո՞վ պէտք է կուռի և դուրս մղի ժողովրդի հոգուց այս ամենը, ո՞ւմ վերայ է ծանրանում այս պատասխանատուութիւնը ... բայց տարաբաղդաբար հէնց մեր շարքում կան այսպիսի գրութեան ջատագովներ և նրանից լուկիայն օգտուողներ:

28 ապրիլի 1909 թ. Շահրիար

Սմբատ Բ. Սարգսեան



Պ Ղ Ա Տ Ո Ն

Կ Ր Ի Տ Ո Ն *)

Սոկրատէս եւ Կրիսոն

1. Սոկրատէս—Ինչո՞ւ այդպէս վաղ ես եկել, ո՞վ Կրիսոն. թէ վաղ չէ:

Կրիսոն—Շատ վաղ է,

Սոկրատէս—Ինչքան վաղ է:

Կրիսոն—Դեռ նոր է լուսանում:

Սոկրատէս—Չարմանում եմ ի՞նչպէս բանտի պահապանը համաձայնել է քեզ ներս թողնել:

Կրիսոն—Նա ինձ արգէն ճանաչում է, ո՞վ Սոկրատէս, և բացի այդ ինձանից լաւութիւն է տեսել:

Սոկրատէս—Բայց դու նոր ես եկել, թէ վաղուց է այստեղ ես:

Ձեռքիս տակ ունեցել եմ ռուսերէն թարգմանութիւնք և լուսարանութիւնները:

Կրիտոն—Բաւական ժամանակ է:

Սոկրատէս—Բայց ինչո՞ւ ինձ չզարթեցրիր, այլ լուռ նստել ես:

Կրիտոն—Զեսը վկայ, ո՞վ Սոկրատէս, որ ես ինքս չէի ուզենայ այդպիսի փորձանքի մէջ լինել և դեռ անքուն էլ մնալ: Արդէն վաղուց զարմանում էի տեսնելով թէ ինչպէս հանգիստ քնում ես և դիտմամբ չզարթեցրի քեզ, որ, որպէս զի, որքան կարելի է ժամանակդ հաճելի անցկացնես: Առաջ էլ շատ անգամ նախանձել եմ քո այդ բնաւորութեանը, բայց աւելի հասնելայ դժբաղդութեան ժամանակ, որ այդպէս թեթեւութեամբ և հեղուցեամբ տանում ես:

Սոկրատէս—Տարօրինակ էլ կլինէր, ո՞վ Կրիտոն, եթէ այս հասակում արտնջայի, որ շուտով պէտք է մեռնեմ:

Կրիտոն—Սակայն, ո՞վ Սոկրատէս, ուրիշ ծերունիների երեխայ հասակը չի արգելում նման դժբաղդութեան մէջ ընկնելով տրտնջալու առաջիկայ դժբաղդութեան դէմ:

Սոկրատէս. Այդ այդպէս է: Բայց ինչո՞ւ վաղ ես եկել:

Կրիտոն—Եկել եմ մի դառն լուր հաղորդելու, ո՞վ Սոկրատէս, ոչ թէ քեզ համար, ինչպէս ինձ է թւում, այլ ինձ և քո բոլոր մերձաւորների համար ծանր և դժուար, ամենից աւելի դժուար ինձ համար:

Սոկրատէս—Ի՞նչ լուր է: Գուցէ Դելֆոսից եկել է այն նաւը, որի գալուց յետոյ ինձ պիտի սպանեն:

Կրիտոն—Դեռ չի եկել, կարծում եմ այսօր կգայ, նա յելով նրանց խօսքերին, որոնք եկել են Սիւնեայից և նաւըն այնտեղ են թողել: Այդ տեղեկութիւններից երևում է պարզապէս, որ այսօր կգայ և ուրեմն վաղը, ո՞վ Սոկրատէս, ստիպուած կլինես հրաժարուել կեանքից:

Ս. Սոկրատէս—Է՛հ, բարի գալուստ, ո՞վ Կրիտոն: Եթէ այդ աստուածներին հաճելի է, թող այդպէս լինի: Սակայն չեմ կարծում, որ այսօր գայ:

Կրիտոն—Ո՞րտեղից ես այդ եզրակացնում:

Սոկրատէս—Կասեմ որտեղից, կարծեմ ինձ պէտք է սպանեն նաւի ժամանելու հետեւեալ օրը:

Կրիտոնը— Կառավարիչները*) գոնէ այդպէս են ասում։
Սոկրատէս— Ուստի, կարծում եմ, որ նա առաջիկայ օրը չի գայ այլ վաղը կգայ. այս եղբայրացնում եմ, այն երազից, որ մի փոքր առաջ գիշերս տեսայ, ուստի այդ նկատմամբ լաւ ես արել, որ ինձ չես զարթեցրել։

Կրիտոն— Այդ Խնչ երազ է։

Սոկրատէս— Ինձ թւում էր մի գեղեցիկ և լուսաւոր կլին սպիտակ շորեր հագած մօտեցաւ ինձ և մօտս կանգնելով ասաց. «Վ Սոկրատէս, երբորդ օրը դու կգաս պտղաբեր Փրիան **):»

Կրիտոն— Ինչ տարօրինակ երազ է, «Վ Սոկրատէս»։

Սոկրատէս— Սակայն, «Վ Կրիտոն», ինձ թւում է, որ միտքը պարզ է։

III. Կրիտոն— Նոյնիսկ շատ պարզ է։ Սակայն, «Վ յարգելի Սոկրատէս, գոնէ այժմ՝ համոզուիր և ազատիր քեզ, որովհետեւ եթէ դու մեռնես, ինձ միայն մի դժբախտութիւն չի պատահի, բացի այն որ կղրկուեմ մի այնպիսի բարեկամից, որի նմանը ոչ մի տեղ երբէք չեմ ճարի, այլ և կարծում եմ կլինեն շատերը, որոնք լաւ չճանաչելով ինձ և թեղ, կկարծեն, որ եթէ ուղենայի քեզ կարող էի ազատել, միայն թէ փողը խնայեցի և անհոգ գտնուեցի։ Սակայն միթէ աւելի վատ համբաւ կլինի քան այն, որ ասեն թէ մէկը դրամի սէրը ընկերոջ սիրուց գերադասում է։ Մեծամասնութիւնը չի հաւատայ, որ, չնայելով մեր բոլոր ջանք ու ճիգերին քեզ համոզելու, դու ինքդ չկամեցար այստեղից փախչել։»

Սոկրատէս— Բայց ինչո՞ւ պէտքէ ուշք դարձնենք մեծամասնութեան կարծիքին, սիրելի Կրիտոն, Խոհեմ, մտածող մարդիկ, որոնց կարծիքը պէտք է աւելի գերադասել, կկարծեն, որ գործն եղաւ այնպէս, ինչպէս պէտքէ լինէր։

Կրիտոն.— Բայց ինքդ տեսնում ես, «Վ Սոկրատէս», որ պէտք է մեծամասնութեան կարծիքը յարգել։ Ներկայ

*) Խօսքը այն 11 պաշտոնեաների մասին է, որոնք հսկում էին բանտերի վրայ։

**) Աբելլէսի հայրենիքն է. Իլիական Թ. երգ. տող 363.

Հանդամանքը ցոյց է տալի, որ նրանք կարող են ոչ միայն ամենափոքր, այլ նոյն իսկ ամենամեծ չարիքը հասցնել նրան, ով որ նրանց առաջ զրպարուում է:

Սակրատէս—Երանի թէ մեծամասնութիւնը կարողա-
նար ամենամեծ չարիքը գործել, որ պէսզի միւս կողմից
հնար ունենար և ամենամեծ բարիքը անելու: Այդ շատ
լաւ կլինէր: Բայց նա ոչ մէկին էլ ընդունակ չէ, որովհե-
տե չի կարող ոչ ոքի ոչ խելացի և ոչ էլ անխելք դարձնել,
այլ անում է այն, ինչ որ պատահում է:

IV. Կրիտոն—Թող այդպէս լինի: Բայց ասա ինձ, դու
գուցէ հոգում ես իմ և ընկերներիս համար, որ երբ քեզ
այստեղից փախցնենք, մատնիչները մեզ կմատնեն, որ քեզ
փախցրինք և ուրեմն ստիպուած կլինինք զրկուել կամ
ամբողջ ստացուածքից կամ նրա մեծ մասից և կամ ու-
րիշ վնաս կկրենք: Եթէ այդ բանից ես վախենում, թող այդ
վախը Մենք արդար կզգանք մեզ քեզ փախցնելով և կեն-
թաւուենք ոչ միայն այսպիսի, այլ եթէ պէտք լինի աւելի
ևս մեծ վտանգի: Լսիր ինձ և ուրիշ կերպ էլ մի վարուիր:

Սակրատէս—Ոչ միայն այդ մասին, ո՞վ Կրիտոն, այլ և
շատ ուրիշ բաների մասին եմ մտածում:

Կրիտոն—Այդ մասին ամենեւին մի մտածիր, որովհե-
տե այնքան էլ մեծ գումար չենք տալու քեզ այստեղից
ազատելու համար: Մի՞թէ չգիտես, որքան քչով բաւակա-
նացող և պատրաստակամ մարդիկ են այդ լրտեսները:
Կարծում եմ քեզ ազատելու համար բաւական կլինեն իմ
փողերը, իսկ եթէ իմ մասին կմտածես, որ ես չպէտք է
զրկուիմ, քո ընկերները ուրախութեամբ կվճարեն այդ
գումարը: Սիմմիաս թէքէացին արդէն տուել է, կտայ և
Կերէսը և ուրիշ շատ շատերը. այնպէս որ այդ մասին,
ինչպէս ասացի, ամենեւին մի մտածիր, որ ազատութիւնը
մեզ նեղութիւն կպատճառի: Չգիտարանաս և դատաւոր-
ների առաջ ասածդ խօսքերի համար, որ բանտից ազա-
տուելով, որոշ պարապմունք չես ունենայ. ամեն տեղ, ուր
էլ գնաս, քեզ կսիրեն: Եթէ կամենաս թէսալեա գնալ,
այնտեղ ծանօթներ ունիմ, որոնք քեզ համար ամեն բան

կանեն և կապահովեն. այնպէս որ Թէսալեայում դու ոչ
օրից ամենեւին դժգոհութիւն չես տեսնի:

Կ. Բացի այդ քո մտադրութիւնը ինձ անարդար է
թւում. մինչդեռ կարող էիր ազատուել, քեզ մատնում ես
և աշխատում ես որ քեզ պատահի այն, ինչ որ թշնամիներն
էին ցանկանում և յաջողուեց էլ նոցա քեզ փշաջ-
ներէ Գո որդիների վերաբերմամբ անարդար ես վարում,
թողնելով նրանց որք, մինչդեռ կարող էիր կրթել և մե-
ծացնել: Գո մեղքը կլինի, եթէ նրանց վիճակը պատահա-
կան լինի, իսկ նրանց հետ կպատահի այն, ինչ որ առ-
հասարակ որբերի հետ է պատահում: Կամ չպէտք է որ-
դիներ ունենալ, իսկ եթէ ունես, պէտք է կրթել, հոգալ
և կերակրել: Իսկ դու, կարծում եմ, ընտրում ես այն,
ինչ որ աւելի հեշտ է անել. պէտք է ընտրել այն, ինչ որ
բարի և ուժեղ կամքի տէր մարդը կընտրի, մանաւանդ
նա, որը ասում է պէտք է կեանքի ընթացքում առաքինի
լինել: Ես քո և իմ ընկերների փոխարէն ամաչում եմ, որ
այս ամբողջ գործը կապացուցանի մեր վախկոտութիւնը
և գործը դատաւորներին յանձնելը, ինչպէս որ եղաւ,
թէ և կարող էր և չլինել և այն, ինչ որ եղաւ դատարա-
նում և այդ բոլորի վերջը—ինչպէս մի ծիծաղալի վերջա-
բան—այս բոլորը, կասեն, իբր թէ մեր վախկոտութեան
և անհոգութեան պատճառով եղաւ, որ ոչ մենք և ոչ դու
քեզ չազատեցինք, մինչդեռ այդ կարելի էր, եթէ մեր
կողմից մի փոքրիկ պատրաստակամութիւն լինէր: Այդպի-
սով, ո՞վ Սոկրատէս, զգուշացիր, որ այդ չարիքի հետ մի-
ասին մեր գլխին և խայտառակութիւն չհասնի: Մտածիր,
բայց մտածելու նոյն իսկ ժամանակ չկայ, պէտք է գործ
սկսել: Մի խորհուրդ կայ միայն՝ առաջիկայ գիշերը ամեն
բան պէտք է վերջանայ, իսկ եթէ էլի յետաձգենք, ան-
կարող կլինենք և հնար չենք ունենալ, Ուրեմն, ո՞վ Սոկ-
րատէս, խնդրում եմ լսիր ինձ և ուրիշ կերպ էլ մի
վարուիր:

Վ. Սոկրատէս.—Միրելի Կրիտոն, քո ցանկութիւնը
չատ գովելի կլինի, եթէ միևնոյն ժամանակ այդ արդա-

րացի էլ լինի, եթէ ոչ որքան այդ մեծ լինի, այնքան աւելի վատ։ Քննենք, տեսնենք այդպէս պէտքէ վարուել թէ ոչ։ Ոչ միայն այժմ, այլ և առաջ իմ մտքերից միայն նրանց վրայ եմ ուշք դարձրել, որոնք ինձ ամենից աւելի արդար են թուացել։ Իսկ ինչ որ առաջ եմ ասել, այժմ չեմ կարող ժխտել, մանաւանդ որ ինձ այս վիճակ ընկաւ։ Ընդհակառակը նոքա այժմ աւելի հաստատուն են և նրանց սիրում եմ և հետևում այնպէս, ինչպէս և առաջ։

Եթէ ներկայ դէպքում նրանցից աւելի լաւ մտքեր չենք պաշտպանելու, լաւ իմացիր, որ քեզ հետ ոչ մի կերպ չեմ համաձայնի, թէ և մեծամասնութիւնը այժմ աւելի քան առաջ, մեզ, ինչպէս երեսնաների, վախեցնէր կապանքներով, մահով և կամ հարստութիւնը գրաւելով։ Այս բոլորից յետոյ ինչպէս աւելի ուղիղ քննենք, Արդեօք լաւ էինք անում, որ ամեն անգամ ասում էինք, ինչպէս ասում ես, թէ կարծիքներից մի քանիսի վրայ պէտք է ուշք դարձնել, իսկ միւսների վրայ ոչ, թէ մահուան վճռից առաջ այդ լաւ էր, իսկ այժմ միայն պարզուեց, որ դրանք միայն խօսքեր են եղել, երեսնայութեան ցնդաբանութեան արդիւնք։ Այո՛ Կրիտոն, ցանկանում եմ քեզ հետ միասին քննել, թէ արդեօք ինձ այժմ ուրիշ կերպ է թւում, երբ այս դրութեան մէջ եմ գտնւում, թէ նոյնն է և պէտք է թողնել, թէ հետեւել նրանց։ Այսպէս թէ այնպէս, բայց այն մարդիկը, որոնք հասկանում են, թէ ինչ են ասում, շատ անգամ հաստատել են այն, ինչ որ այժմ ես եմ ասում—որ մարդ մի քանի կարծիքների չպէտքէ հետեւի, իսկ միւսներինը պէտք է գնահատէ։ Ի սէր աստուածների, Կրիտոն, միթէ այս խօսքերը քեզ հաճելի չեն։ Որովհետեւ վաղը քեզ մահ չի սպասում և առաջիկան էլ չի խանգարում, ուստի, որքան հնարաւոր է քննել մարդկային գործերը, լաւ նայիր, միթէ ճշմարիտ չէ, որ ասում են, թէ ոչ բոլոր մարդկանց կարծիքները պէտքէ յարգել, այլ մի քանիսինը, այո՛, միւսներինը ոչ։ Ի՞նչ կասես, միթէ լաւ չի ասած։

Կրիտոն—Լաւ է։

Սոկրատէս—Հետեաբար բարի կարծիքները պէտք է յարգել, իսկ չարերը ոչ։

Կրիտոն—Այո։

Սոկրատէս—Իսկ չէ՞ որ խելացիների կարծիքները բարի են իսկ անխելքներինը՝ ոչ։

Կրիտոն— Հապա ուրիշ ի՞նչ կերպ։

VII. Սոկրատէս—Հապա տեսնենք ի՞նչպէս կվճռենք այս հարցը։ Մարմնամարզութեամբ պարագոյ դարդը և բացառապէս այդ գործով զբաղւողը ամեն պատահական մարդի գովասանքի ու կարծիքի է ուշք դարձնում, թէ միայն բժշկի և մարմնամարզութեան ուսուցչի։

Կրիտոն—Միայն մէկի։

Սոկրատէս—Ուրեմն պէտքէ վախենայ այդ մէկի նախատինքից և ուրախանայ նրա գովասանքներից։

Կրիտոն—Պարզ է։

Սոկրատէս—Ուրեմն պէտքէ գործել և վարժուել մարմնամարզութեան մէջ և ուտել ու խմել այնպէս, ինչպէս այդ մէկ ուսուցիչն է կարծում և գովում, քան մնացած բոլորը։

Կրիտոն—Ծիշտ է։

Սոկրատէս—Լաւ, բայց եթէ չի լսում այդ մէկին և չի էլ յարգում նրա կարծիքը, այլ մեծամասնութեան խօսքին է լսում և նրանց, որոնք այդ գործում ոչինչ չեն հասկանում, մի՞թէ չարիքի չի հանդիպի։

Կրիտոն—Իհարկէ կհանդիպի։

Սոկրատէս—Ի՞նչ է այդ չարիքը, ի՞նչին է վերաբերում, և չլսողի ի՞նչ տեղին է հասնում։

Կրիտոն—Պարզ է, որ մարմնին, որովհետև մարմինն է քայքայւում։

Սոկրատէս—Լաւ ես ասում. նոյնպէս պէտքէ մտածել, թի՞վ Կրիտոն, մնացած գէպքերում, որոնց հարկ չկայ մէջ բերել։ Այսպէս արդարի և անարդարի, վատի ու լաւի, ամօթի ու անամօթի գէպքերում, որոնց մասին է այժմ խօսքը մեծամասնութեան կարծիքից պիտի վախենալ և

քաշուել, թէ մէկի կարծիքից, եթէ կայ մէկը, որը այդ բանը հասկանում է, որից և պէտք է վախենալ և քաշուել աւելի, քան միւսներից, բոլորին միասին վերցրած։ Չլսելով նրան, մենք կփշացնենք և կայլանդակենք այն, ինչ որ ճշմարտութեամբ կարելի էր լաւացնել, իսկ ստութեամբ վատացնել։ Գուցէ այդպէս չէ։

Կրիտոն — Կարծում եմ, որ այդպէս է, սփ Սոկրատէս։

Մ. Սոկրատէս — Է՛, եթէ տգէտի կարծիքին հետեւելով փշացնենք այն, ինչ որ առողջութիւնից լաւանում է իսկ հիւանդութիւնից վատանում, արժէ արդեօք ապրել, երբ այն քայքայուն կլինի։ Խօսքս մարմնի մասին է, ուղիղ չէ։

Կրիտոն — Ուղիղ է։

Սոկրատէս — Արդեօք արժէ քայքայուած և ընկած մարմնով ապրել։

Կրիտոն — Ամենեին։

Սոկրատէս — Արդեօք արժէ ապրել, երբ քայքայուած է այն, ինչ որ անարդարութիւնից փշանում է, իսկ արդարութիւնից օգուտ է ստանում։ Թէ այն, որին վերաբերում է արդարութիւնը և անարդարութիւնը — ինչ էլ որ լինի — մարմնից աւելի վատ է։

Կրիտոն — Ամենեին։

Սոկրատէս — Ուրեմն աւելի թանկագին է։

Կրիտոն — Անկասկած։

Սոկրատէս — Ուրեմն, սիրելիս, պէտքէ ուշք դարձնենք ոչ այն բանի վրայ, թէ ի՞նչ է ասում մեծամասնութիւնը, այլ թէ ի՞նչ է ասում արդարն ու անարդարը ճանաչողը և ի՞նչ է պահանջում ճշմարտութիւնը։ Այնպէս որ նախ և առաջ քո առաջարկութեան մէջ այն է անարդար, որ ասում ես արդարի ու անարդարի, բարու ու դրանց հակառակների մասին պէտքէ լսել մեծամասնութեան կարծիքը։ Բայց մէկը կարող է ասել, որ մեծամասնութիւնը ընդունակ է մեզ սպանելու։

Կրիտոն — Պարզ է այդ, որ կասի, սփ Սոկրատէս։

Սոկրատէս — Ծիշտ ես ասում, սփ զարմանալի, այն

բանը, որի մասին խօսում ենք, կարծում եմ, նման է առաջինին. ուրեմն լաւ նայիր, արդեօք հաստատ չէ՞ այն, որ պէտքէ ուշք դարձնել ոչ թէ այն բանի վրայ, թէ պէտքէ ապրել այլ թէ ինչպէս ապրել:

Կրիտոն—Հաստատատ է:

Սոկրատէս—Եւ այն, որ գեղեցիկը, արդարը և լաւը միեւնոյն բաներն են, մնում ես այդ կարծիքին թէ ոչ:

Կրիտոն—մնում եմ:

IX. Սոկրատէս—Հետեւաբար մեր ընդունած ճշմարտութիւնների հիման վրայ քննենք թէ արդեօք իրաւունք ունիմ այստեղից դուրս գալ հակառակ աթէնացիների կամքին թէ ոչ և եթէ երևար որ իրաւունք ունիմ, կըփորձենք, եթէ ոչ, կթողնենք այդ մտադրութիւնը: Ինչ վերաբերում է քո այն դատողութիւններին, որպիսիներն են մեծամասնութեան կարծիքը, դրամից զրկուիլը, երեսխանների կրթութիւնը, ճիշտն ասած, ճիշդ Կրիտոն, այդ մեծամասնութեան համար անհասկանալի բաներ են, նա հեշտութեամբ սպանում է և նոյնիսկ պատրաստ է կենդանացնելու նորից, եթէ միայն կարողանար: Բայց մենք, հետեւելով առողջ դատողութեանը, ոչ մի ուրիշ բանի վրայ ուշք չենք դարձնի, բացի մի բանից, որի մասին խօսում էինք, արդեօք արդար կլարուենք, փող տալով և շնորհակալութիւն յայտնելով նրանց, որոնք ինձ այստեղից պէտքէ հանեն, թէ կատարելով այդ ամենը հակառակ ճշմարտութեան վարուած կլինենք: Եթէ երևաց, որ անարդար ենք վարուում, այլ ևս այդ մասին հոգալ պէտք չէ, եթէ նոյն իսկ մեռնելու կարիք չինի. աւելի լաւ է ժամանակը սպարապ անցկացնել կամ մի ուրիշ բան անել, բայց այստեղ մնալ, քան անարդար վարուել:

Կրիտոն—Կարծում եմ, որ լաւ ես ասում, ճիշդ Սոկրատէս, սակայն ասա, ուրեմն ինչ անենք:

Սոկրատէս—Քննենք միասին սիրելիս, և եթէ որիէ հակառակ բան ունենաս ասելու, ասա քեզ կլսեմ, իսկ եթէ ոչ, դադարիր սիրելիս միշտ միեւնոյնը կրկնելուց, որ պէտքէ հակառակ աթէնացիների կամքի այստեղից դուրս

դալ: Ինձ համար շատ թանկ է, որ ինձ համոզես այդպէս վարուել և ոչ քեզ հակառակ: Ահա քննութեան սկիզբը, արդեօք քեզ չի գոհացնում, փորձիր իմ հարցերին պատասխանել, որքան կարելի է լաւ մտածելով:

Կրիտոն—Լաւ, կփորձեմ:

X. Սոկրատէս—Արդեօք ենթադրում էինք, որ ոչ մի դէպքում կամաւոր կերպով չպէտք է անարդար վարուել, թէ մի քանի դէպքերում պէտք է, միւսներում ոչ: Թէ անարդար վարուելը չար բան է և տգեղ և որի մասին ինչպէս առաջներում, այնպէս և այժմ համաձայնել էինք:

Թէ արդեօք մեր անցեալ ամբողջ համաձայնութիւնը այս մի քանի օրուայ ընթացքում թռաւ և մենք, ճշմարիտոն, որ երբեմն լուրջ էինք դատում, այժմ, այս հասակում, մեր վարմունքով երեխաների վարմունքից չենք գերազանցելու: Կամ թէ աւելի հաւանականը այն է ինչպէս որ առաջ էինք ասում—արդեօք ամբոխը համաձայնում է թէ ոչ և արդեօք ենթարկուելու ենք մեծ թէ աւելի փոքր դժբախտութեան, այնուամենայնիւ անարդար վարուելը անարդար վարուողի համար և ամօթ է և վատ: Ասում ենք թէ ոչ:

Կրիտոն—Ասում ենք:

Սոկրատէս—Նշանակում է ոչ մի դէպքում չպէտք է անարդար վարուել:

Կրիտոն—Ի հարկէ չպէտք է:

Սոկրատէս—Եթէ ոչ մի դէպքում անարդար չպէտք է վարուել, ուրեմն անարդարութեանն էլ անարդարութեամբ չպէտք է պատասխանել, ինչպէս ամբոխն է կարծում:

Կրիտոն—Պարզ է, որ չպէտք է:

Սոկրատէս—Ուրեմն ի՞նչ, Կրիտոն, պէտք է չարիք գործել թէ ոչ:

Կրիտոն—Ոչ երբէք, ճշմարտութեամբ:

Սոկրատէս—Է՛, ուրեմն չարիքին չարիքով պատասխանել ինչպէս ամբոխն է պահանջում՝ անարդար է թէ արդարացի:

Կրիտոն—Ի հարկէ անարդար է:

Սոկրատէս—Որովհետեւ չարիք դործելու և անարդար վարուելու մէջ տարբերութիւն չկայ:

Կրիտոն—Ճշմարիտ ես ասում:

Սոկրատէս—Այսպիսով պէտք չէ ոչ չարիք և ոչ էլ անարդարութիւն ցոյց տալ ոչ մի մարդու, եթէ նոյն իսկ նրանից փնաս կրած լինենք: Նայիր, Կրիտոն, որ եթէ այս մտքի հետ համաձայն ես, չհակառակես նախկինին. դիտեմ, որ քչերն են այսպէս մտածում և միայն նրանք կհամոզուեն, որոնք այսպէս են մտածում, իսկ որոնք հակառակ են կարծում, մի ընդհանուր համոզմունք չունենալով, միմեանց կնայեն, տեսնելով, թէ ինչպէս իրենք տարբեր մտքեր ունենաւ. Լաւ նայիր, արդեօք համաձայն ես և միւս կարծիքի հետ, այն ժամանակ կսկսենք մեր խորհուրդը, որ երբէք արդարացի չէ ոչ անարդար վարուելը և ոչ վրէժ լուծելը և ոչ էլ եթէ չարիք կրես մէկից՝ փոխարէնը հատուցանելը. թէ՛ այս մտքից յետ ես կանգնում և չես համաձայնում: Ես և առաջ և այժմ այնպէս եմ կարծել և կարծում եմ, եթէ դու այլ կերպ ես կարծում ասան և համոզիր, իսկ եթէ մնում ես նոյն կարծիքին, այն ժամանակ լսիր շարունակութիւնը:

Կրիտոն—Մնում եմ նախկին կարծիքին և համաձայն եմ քեզ հետ. շարունակիր:

Սոկրատէս—Կշարունակեմ. աւելի շուտ կհարցնեմ, եթէ մէկը ընդունել է, որ այս ինչ բանը արդար է, պէտք է կատարէ, թէ ոչ:

Կրիտոն—Պէտք է կատարէ:

XI. Սոկրատէս—Համաձայն այս տեսակէտի այժմ ասան, առանց քողաքի համաձայնութեան դուրս գալով այստեղից արդեօք որեւէ մէկին չարիք հասցնում ենք թէ ոչ և եթէ հասցնում ենք, արդեօք ոչ նրանց, որոնք պակաս են արժանի այդ բանին և կատարում ենք այն, ինչի համար որ համաձայնել էինք, թէ արդարացին այդ է:

Կրիտոն—Չեմ կարող պատասխանել հարցերիդ, ո՞վ Սոկրատէս, որովհետեւ չեմ հասկանում:

Սոկրատէս — Նայիր այժմ, եթէ ուզենանք այստեղից փախչել, — կամ թէ ինչպէս ուզում ես անուանիր այդ գործը — օրէնքները և քաղաքը դան մեզ մօտ և ասին ռասան մեզ, ո՞վ Սոկրատէս, այդ ինչ գիտաւորութիւն ունես, քո այդ գործով՝ ինչ ես մտածում անել, որքան հնար ունես մեզ օրէնքներին և ամբողջ քաղաքին վնասել, թէ կարծում ես, որ այն քաղաքը, որտեղ դատաւորների վճիռները չեն իրագործւում, այլ մասնաւոր անհատները զանց են առնում և ոչնչացնում, կարող է դեռ այդ քաղաքը կանգուն մնալ և չքայքայուիլ, ինչ կպատասխանես, ո՞վ Կրիտոն, այդ և նման հարցերին։ Ուրիշը, մանաւանդ հռետորը շատ քան կարող է տեսլ այն խախտուած օրէնքի պաշտպանութեան համար, որը պահանջում է յարգել իր դրած վճիռները։ Գուցէ մենք այսպէս կարող էինք պատասխանել, որ քաղաքը անարդար է վարւում մեզ հետ և ուղիղ վճիռ չէ տալի. այդպէս կպատասխանենք, թէ ուրիշ կերպ։

Կրիտոն — Ձեռք վկայ, որ այդպէս։

XII. Սոկրատէս — Ուրեմն ինչ — կասին օրէնքները — մի՞թէ, ո՞վ Սոկրատէս, որեւէ այլ բանում քեզ հետ համաձայնած ենք, բացի այն, որ պէտք է քաղաքի վճիռներին ենթարկուես. եթէ զարմանանք նրանց այդ խօսքերի վրայ իրաւամբ կասեն — ո՞վ Սոկրատէս, մեր այս խօսքերի վրայ մի զարմանար, այլ պատասխանիր, որովհետեւ ինքդ սովոր ես հարցեր տալ և պատասխաններ ստանալ, ասան ուրեմն, մեր քաղաքի ո՞ր յանցանքի համար ես ուզում մեզ ոչնչացնել։ Չէ որ մենք ծնեցինք քեզ և մեր միջոցով քո հայրդ ամուսնացաւ քո մօրդ հետ և քեզ մեծացրին. արդեօք ամուսնութեան այս օրէնքի համար ես մեզ դատաւարտում, որեւէ պակասութիւն գտնելով, — Ձեռք դատաւարտում, կասէի. — գուցէ չես հաւանում ծնուածի և դատաւարակութեան ու պահպանութեան վերաբերեալ օրէնքները, որոնց համաձայն և կրթուել ես։

Մի՞թէ այդ մասին վերաբերեալ օրէնքները լաւ չեն տրել, որ հրամայել են քո հօրը, որ քեզ երաժշտութիւն և

մարմնամարդութիւն սովորեցնէ.— Լաւ են, կառէի—լաւ ուրեմն, երբ ծնուել ես և դաստիարակուել մեղանով, արդեօք իրաւունք ունե՞ս ասելու, որ մեր շառաւիղը չե՞ս և մեր ծառան, դու և քո նախահայրերը: Եթէ այդ այդպէս է, միթէ ուրեմն կարծում ես, որ քո և մեր իրաւունքները հաւասար են և երբ հրամայում ենք մի բան անել, կարծում ես իրաւունք ունե՞ս հակաճառելու: Քո ունեցած իրաւունքը երբէք հաւասար չի եղել ոչ քո հօր և ոչ քո տիրոջ, եթէ ի հարկ է ունեցել ես, իրաւունքներին, այնպէս որ, երբ նրանցից հալածուում էիր կամ որեւէ շարիք էիր ստանում, չէիր պատասխանում և հակառակը չէիր անում և կամ երբ ծեծում էր, դու էլ նրան չէիր ծեծում և այլ նման դէպքեր: Իսկ հայրենիքի և օրէնքների վերաբերմամբ այլ կերպ ես վարւում, մենք քեզ համար մահ ենք որոշում, կարծելով, որ այդ է արդարը, դու էլ քո կողմից, որքան հնարաւոր է, աշխատում ես օրէնքներին, մեզ և հայրենիքին փնասել և ասում ես, որ այդ անելով արդար ես վարւում և դու դեռ ճշմարտութեան նախանձախնդիր ես: Միթէ այդպիսի իմաստուն ես: Միթէ մոռացել ես, որ հայրենիքը ու հօրից և մօրից և բոլոր նախահայրերից աւելի պատուի է արժանի, աւելի գնահատելի և սրբազան է, աստուածների և խելօք մարդկանց համար աւելի կարևոր: Պէտք է փառաբանել, աւելի հնազանդել և ծառայել հայրենիքին, նոյն իսկ երբ սաղայրանում է, աւելի քան հօրը և կամ համոզել կամ լսել, ինչ որ նա հրամայում է տանջուել և այն էլ անտրտունջ, եթէ նա ծեծի, եթէ բանտարկի, եթէ ուղարկի պատերազմ՝ վիրաւորուելու կամ մահուան ենթարկւելու պէտք է այդ բոլորին հնազանդուել և այդ է իրաւացին: Երբէք չպէտք է փախչել նշանակած տեղից, այլ և պատերազմի և դատաստանի ժամանակ և ամեն տեղ պէտք է անել այն, ինչ որ քաղաքն ու հայրենիքն է հրամայում: Կամ թէ ցոյց տալ սրտեղից է առաջացել անարդարութիւնը: Իսկ բռնութիւն դուրծ դնել ինչպէս հօր և մօր նկատմամբ չպէտք է լինի ևս առաւել հայրենիքի նկատ-

մամբ: Արդեօք այս բոլորի դէմ ինչ կասենք, ով Կրիտոն, օրէնքները ճշմարիտ են ասում, թէ ոչ:

Կրիտոն—Կարծում եմ, որ ճշմարիտ են ասում:

XIII. Սոկրատէս—Նայիր, ով Սոկրատէս, կասեն օրէնքները, արդեօք ճշմարիտ ենք ասում, որ դու քո այդ մտադրութեամբ իրաւացի բան չես անում: Մենք ենք քեզ ծնել, կրթել մեծացրել, տալով այն ամենը, ինչ որ գեղեցիկ է և քեզ և մնացած բոլոր քաղաքացիներին: Միևնոյն ժամանակ ազատութիւն ենք տուել ամեն մէկին մնալ, ծանոթանալ մեզ՝ օրէնքներիս և քաղաքի գործերի հետ, եթէ մեզ չսիրէ, ինչ որ իրեն է պատկանում վերցնի և գնայ, ուր ուզում է: Մեզանից՝ օրէնքներիցս և ոչ մէկը չի արգելում, եթէ մէկը ուզում է փոխադրուել գաղութ, եթէ դիւր չենք գալի ոչ մենք և ոչ էլ քաղաքը, եթէ այնտեղից էլ ուզում է գաղթել այլ տեղ, թող գնայ, վերցնելով այն, ինչ որ իրենն է: Իսկ նա, ով որ մեզ մօտ մնայ, տեսնելով թէ ինչպէս ենք դատ կատարում, և քաղաքի այլ գործերը կառավարում, նրան մենք համարում ենք արդէն գործնականապէս մեզ հետ համաձայնած և ինչ որ հրամայենք պէտք է կատարէ, իսկ չըլտողին եռակի յանցաւոր ենք համարում, նախ մեզ, իբրև ծնողների, չի լսում, ապա իբրև անուցանողների չի լսում և երրորդ իբր դաշն կապող, որ մեզ լսի, չի լսում և մեզ էլ չի համոզում, որ վատ ենք վարում: Մինչդեռ մենք կոպիտ կերպով չենք հրամայում, այլ թողնում ենք իւրաքանչիւրի ազատ կամքին կամ մեզ համոզել կամ կատարել վճիռը, իսկ նա դրանցից և ոչ մէկը չի կատարում:

XIV. Այդ նոյն մեղադրանքներին ենթարկուելու ես և դու, ով Սոկրատէս, եթէ կատարես այն, ինչ որ մտադիր ես և ոչ թէ որևէ աթէնացուց պակաս, այլ աւելի ես դատապարտուելու: Եթէ հարցնէի—ինչո՞ւ համար—իրաւամբ կարող էին պատասխանել, որ բոլոր աթենացիներից ամենից սիրով ես եմ՝ ընդունել այդ պայմանները: Կարող են ասել—ո՞վ Սոկրատէս, մեր կեանքում մեծ ապացոյց-

ներ ունենք, որ մենք և քաղաքը քեզ հաճելի ենք եղել, որովհետև այստեղ չէիր մնայ, եթէ միւս աթենացիներից աւելի լաւ չապրէիր: Նոյն իսկ հասարակական տոների հանդէսների ժամանակ քաղաքից դուրս չես գնացել և ոչ մի այլ տեղ բացի պատերազմից, երբէք չես ճանապարհորդել, ինչպէս շատ ուրիշները, ցանկութիւն չես ունեցել ծանօթանալ ուրիշ քաղաքի և ուրիշ օրէնքների հետ, մենք և քաղաքը քեզ բաւականութիւն ենք տուել: Այդքան ուրեմն խորն ես սիրում մեզ և համաձայնեցիր մեր կամքով կառավարուել, նոյն իսկ որդիներ ունեցար այստեղ, որովհետև սիրում էիր քաղաքը: Եթէ դատաստանի ժամանակ կգերադասէիր աքօորը, ինչպէս այժմ, հակառակ քաղաքի ցանկութեան ուզում ես, այն ժամանակ նրա համաձայնութեամբ այդ կլինէր: Այն ժամանակ ցոյց էիր տալիս, երբ ոչ թէ հակառակ քո կամքի, այլ սիրով կմեռնիս և մահը փախուստից գերադասում ես, իսկ այժմ չես ամաչում քո խօսքերից, ոչ էլ մեզ օրէնքներիս ուշք չես դարձնում, ցանկանալով ոչնչացնել մեզ, վարւում ես ինչպէս մի փախկոտ ստրուկ, ցանկանալով փախչել, հակառակ վճռի և այն համաձայնութեան, որով դու պէտք է կառավարուէիր: Ուրեմն նախ պատասխանիր՝ ճիշտ չե՞նք ասում, որ համաձայնել ես մեզանով կառավարուել գործով և ոչ խօսքով: Ի՞նչ կասենք, ո՞վ Կրիտոն, արդեօք չենք համաձայնի:

Կրիտոն—Անհրաժեշտ է, ո՞վ Սոկրատէս:

Սոկրատէս—Այսպէս ուրեմն, կասեն նրանք, ճիշտ չէ, որ ոտնակոխ ես անում տուած համաձայնութիւնդ, որը տուել ես ոչ ստիպմամբ և ոչ էլ խաբուելով և ոչ էլ ստիպուած էիր կարճ ժամանակ խորհրդակցել այդ մասին, այլ եօթանասուն տարուայ ընթացքում և այդ ժամանակում կարող էիր հեռանալ, եթէ մենք քեզ հետ չեկանք և քո տուած համաձայնութիւնն էլ իրաւացի չերիաց: Դու չգերադասեցիր ոչ Լակեդեմոնը, ոչ Կրէտէն, որոնց ամեն մի դէպքում համարում էիր աւելի լաւ կազմակերպուած և ոչ էլ հելլենական կամ վայրենիների մի

քաղաք, այլ աւելի քիչ դուրս եկար հայրենիքից, քան կաղերը, կայրերը և անդամալոյժները։ Այսպէս ուրեմն պարզ է, որ քեզ աւելի դիւր եկան մեր քաղաքը և օրէնքները քան միւս աթէնացիներին, արդեօք ում է քաղաքը առանց օրէնքների դիւր գալիս։ Այժմ քո տուած համաձայնութեանը հաւատարիմ չես մնում։ Բայց դու մեզ կըլսես, ճի՛վ Սոկրատէս և ծաղրի առարկայ չես դառնայ քաղաքում այստեղից հեռանալով։

XV. Նայիր այժմ, այդպէս վարուելով և մի այդպիսի յանցանք գործելով ինչ բարիք կարող ես անել քեզ կամ քո աշակերտներին, որ նրանք վտանգի կենթարկուին և ստիպուած կլինեն քաղաքից փախել կամ ստացուածքից զրկուել, այդ շատ պարզ է։ Դու երևի կերթաս մօտիկ քաղաքներից մէկը կամ Թէբէ կամ Մէգարա, որովհետեւ երկուսն էլ լաւ են կազմակերպուած և թշնամի կերեւաս, ճի՛վ Սոկրատէս, այնտեղի կառավարութիւններին և ամեն ոք, որի համար թանկ է իւր քաղաքը, քեզ վրայ կնայի իբրեւ օրէնքը ստնակոխ անողի վրայ և կհաստատես դատաւորների վճիռը, որ նրանք արդար դատ են արել, որովհետեւ օրէնքները ստնակոխ անողը իրաւամբ կարող է համարուել երիտասարդներին և անմեղ մարդկանց փշացնող։ Գուցէ խոյս կտաս կարգաւորեալ քաղաքներից և կրթուած մարդկանցից, արդեօք այդպէս վարուելու դէպքում արժէ այնուհետեւ ապրել։ Արդեօք նրանց մօտենալով չես ամաչի քո խօսքերից, ճի՛վ Սոկրատէս, այն խօսքերից, որ ասում էիր թէ առաքինութիւնը, արդարութիւնը, օրէնքները և քաղաքային հաստատութիւնները մարդկանց համար ամենաթանկագին բաներն են։ Պէտք է որ ամաչես։ Գուցէ խոյս տաս այդ տեղերից, դնաս Թէոսալիա, Կրիտոնի ծանօթների մօտ, որտեղ թագաւորում են կամայականութիւնն ու անկարգութիւնը, երևի քեզ ուրախութեամբ կլսեն, թէ ի՜նչպէս ծիծաղելի կերպով փախել ես բանտից վերցնելով մի ծածկոց, մուշտակ կամ մի այլ բան, ինչ որ առհասարակ սովոր են փախըստականներն վերցնել և այդպիսով փոխել ես քո արտա-

քինը, Միթէ այնտեղ չի լինի մէկը, որ ասի, թէ այդպէս
ծեր լինելով, երբ քեզ քիչ միջոց է մնում ապրելու, ինչ-
պէս համարձակուեցիր այդպէս ամօթալի կերպով վարուել,
այն մեծ օրէնքները ոտնակոխ անելով: Երևի այդպէս
կլինի, եթէ մէկին չվերաւորես, իսկ եթէ ոչ ապա, ո՞վ
Սոկրատէս, կլսես քեզ համար շատ աւելի անտեղի խօս-
քեր: Դու պէտք է ծառայես և ենթարկուես մարդկանց,
ի՞նչ պէտք է անես թէսսալիայում, բայց միայն ուրա-
խութիւն, կարծես խնջոյքի ես հրաւիրուել: Իսկ ճշմար-
տութեան, առաքինութեան մասին եղած խօսքերդ ուր
կերթան: Գուցէ դու ուզում ես որդիներիդ համար ապ-
րել, որ նրանց կրթես և մեծացնես: Յետոյ ի՞նչ, թէսսա-
լիա տանելով, կրթելով և մեծացնելով դու նրանց օտա-
րացնելու ես և քեզ պարտական ես դարձնելու: Թէ կար-
ծում ես, որ քո կենդանութեամբ և ղեկավարութեամբ
աւելի լաւ կկրթուեն և կմեծանան, քան առանց քո
ներկայութեան: Գո աշակերտները կմտածեն նրանց մա-
սին: Եթէ քո թէսսալիա փախչելու դէպքում հոգ են
տանելու, միթէ Հադէս գնալու դէպքում չեն հոգայ:
Եթէ քո աշակերտներից, բարեկամներից որեւէ օգուտ կա-
րելի է սպասել, ապա նրանք պէտք է որ հոգան:

XVI. Ո՞վ Սոկրատէս, լսիր ուրեմն մեզ, քո դաստի-
արակներին և արդարութիւնից մի գերադասիր ոչ երե-
խաներին, ոչ կեանքը և ոչ ուրիշ բան, որպէս զի Հադէս
գնալով կարողանաս այդ բանովը պաշտպանուել այնտեղի
իշխանաւորների առաջ, որովհետեւ ինչպէս այստեղ, այն-
պէս էլ այնտեղ քո այդ վարժուէքը չի լինի ոչ լաւ, ոչ
ճշմարիտ, ոչ արդար, ոչ քեզ և ոչ էլ քոյիներին ոչ մէ-
կին օգտակար չի լինի: Եթէ այժմ հեռանաս, կհեռանաս
վշտացած ոչ թէ մեզանից՝ օրէնքներիցս, այլ մարդկան-
ցից: Եթէ փախչես այդպէս խայտառակ կերպով, հակա-
ռակ վարուելով և վնասելով ցրելով քո տուած համաձայ-
նութիւնը և վնասելով նրանց, որոնք ամենից քիչ էին
արժանի այդ բանին՝ քեզ քո ընկերներին և հայրենիքին
ու մեզ, մենք քո կեանքում քեզ միշտ դժուարութեան

մէջ կգնենք: Իսկ այնտեղ մեր եղբայրները, Հադէսի օրէնքները, քեզ հետ լաւամիտ չեն վերաբերուի, իմանալով, որ քո կարողութեան չափ փորձել ես մեզ ոչնչացնել: Մի լսիր ուրեմն Կրիտոնի ասածներին, այլ աւելի մեզ լսիր:

XVII. Այո, սիւրբի ընկեր Կրիտոն, լաւ իմացիր, որ այս եմ լսում, ինչպէս կօրիւրանտներին*) Ֆլէյտի ձայնը. նրանց այդ ձայնը այնպէս զօրեղ է հնչում իմ ափսոսանքներում, որ ուրիշ խօսքեր լսել չեմ կարողանում: Իմացիր ուրեմն որ այս է իմ համոզմունքը և եթէ սկսես հակաճառել, ի զուր կլինի: Սակայն եթէ կարծում ես, թէ որևէ օգուտ կարող է տալ քո խօսքը ասա:

Կրիտոն—Ոչ, սիւ Սոկրատէս, ոչինչ չեմ կարող ասել:

Սոկրատէս—Վերջացրու ուրեմն, սիւ Կրիտոն, անենք այնպէս, քանի որ Աստուած է առաջնորդում դէպի այն:

Բնագրից թարգմանեց Pessimist

ՎԱՐՍԿԻՉ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ա.

Մարդկային կեանքի մէջ ամեն ինչ ձևոք է բերում սովորութեամբ և նմանօրութեամբ: Ինչպէս որ նորածին երեխան բառերի արտասանութիւնը, առարկաների անունները, մտքերի արտայայտութիւնը սովորում է հետզհետէ, նմանելով իրան շրջապատող մեծերին, այսպէս էլ այդ նմանելու և ձևեր ընդունելու իւրացնելու սովորութիւնը շարունակում է մարդկային կեանքի ամբողջ ընթացքում նմանուելու ձգտումը, որ արհամարհանքի կամ ծաղրելու ժամանակ մենք «կապկութիւն» ենք անուանում, այնքան զօրեղ է, որ իրօք մեզանից ոչ մէկը ազատ չէ այդ ձգտումից-կապկութիւնից: Ամենքը միատեսակ և նոյն ժամանակի ընթացքում չեն իւրացնում նմանուելու հակումը, այդ կախում է հասակից, սեռից, կրթութեան ձևից և ընաւորութիւնից-տեմպերամենտից: Ամենից շատ, արագ և պատճէնօրէն նմանում են փոքրահասակները, դիւ-

*) Կօրիւրանտները քրմեր են և Փռիւզիայի առաւուածուհու՝ Կլերիւայի հետևողները: Սրա տօներին աղմկալի երաժշտութիւն էր տեղի ունենում: